# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# RA SYUNIK MARZ




| *Մարզկենտրոնը՝* | *Marz centre* |
|---|---|
| ք. Կապան | Kapan town |
| ***Տարածաշրջանները՝*** | ***Territoires*** |
| Կապան, | Kapan, |
| Գորիս, | Goris, |
| Սիսիան, | Sisian, |
| Մեղրի | Meghri |
| ***Քաղաքները՝*** | ***Towns*** |
| Կապան, | Kapan, |
| Գորիս, | Goris, |
| Սիսիան, | Sisian |
| Քաջարան, | Qajaran, |
| Մեղրի, | Meghri, |
| Ագարակ, | Agarak, |
| Դաստակերտ | Dastakert |

| | |
|---|---|
| Տարածքը<br>Territory | 4 506 քառ. կմ/<br>sq. km |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը<br>Territory share of the marz in the territory of RA | 15.1 % |
| Համայնքներ, 2017թ. տարեսկզբի դրությամբ<br>Communities, as of the beginning of 2017 | 72 |
| Քաղաքներ<br>Towns | 7 |
| Գյուղեր<br>Villages | 127 |
| Բնակչության թվաքանակը 2017թ. տարեսկզբի դրությամբ<br>Population number as of the beginning of 2017 | 138.9 հազ. մարդ/<br>ths. person |
| *այդ թվում՝*<br>*of which:* | |
| քաղաքային<br>urban | 93.9 հազ. մարդ/<br>ths. person |
| գյուղական<br>rural | 45.0 հազ. մարդ/<br>ths. person |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը<br>Share of marz population size in RA population size | 4.6 % |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը<br>Share of urban population size | 67.6 % |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր<br>Agricultural land | 306 896.9 հա/<br>ha |
| այդ թվում՝ վարելահողեր<br>of which: arable land | 43 848.2 հա/<br>ha |

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին:

Syunik marz of RA is situated in the south of the Republic of Armenia. In the North the marz borders with RA Vayots Dzor marz, in the South it borders with Iran, (the length of border is 42 km), in the West - Nakhijevan and in the East - Artsakh.

ՀՀ Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ):

Syunik marz of RA lays on the Zangezur nature area, which includes the basin of upper and average flows of he Vorotan, Voghch rivers and the eastern slopes of the Zangezur, which is the highest after the South Caucasus in the Caucasus mountain range. The highest mountain of the marz is the Kaputjugh (3 906 m), and the lowest place is the canyon of Meghri ( Arax valley- 380 m).

Կապան քաղաքից հարավ-արևելք՝ Ծավ գետի հովտում է գտնվում ***«Սոսու պուրակ»*** պետական արգելավայր տեղամասը, որն իր մեջ ներառում է Կովկասում ամենախոշոր արևելյան բնական սոսիների ռելիկտային պուրակը, զբաղեցնելով 64.2 հա տարածք: Պուրակի որոշ ծառերի տարիքն անցնում է մի քանի հարյուր տարուց: Որոշ ծառերի բների տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝30-35 մ-ի: Այն սահմանակից է նեղ կիրճերով, թավուտ անտառներով **«Շիկահող» պետական արգելոց** տեղամասին, որը գտնվում է Կապան քաղաքից 25 կմ հեռավորության վրա, Խուստուփ լեռան հարավ-արևելյան և Մեղրու լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջերին, Ծավ և Շիկահող գետերի վերին ավազաններում, 700 - 2 800 մ բարձրություններում, զբաղեցնելով 12 137 հա: Ունի հազվագյուտ բնություն, թավուտ անտառներ, նեղ կիրճեր, հարուստ կենդանական աշխարհ, տարածքում կան պատմամշակութային հուշարձաններ:

In the south-east of the city of Kapan, on the Tsav River, the Sosue Park is a state-of-the-art spot, which includes a 64.2 hectare relict grove of the largest natural orchids in the Caucasus. The age of some trees at this unique park is over houdred years reaching a diametr of 3 m, and the height of 30-35 m. It is bordered by narrow lakes, in the "Shikahogh" peninsula section, located 25 kilometers from the town of Kapan, to the south-east of Mount Khustup and to the north of the Meghri mountain range. In the upper basin of Tsav and Shikahogh Rivers, with a height of 700-2 800 m, occupying 12 137 hectares. It has a rare nature, dark letters, narrow gorges, rich animal life, and there are historical and cultural monuments in the area.

«Խուստուփ» պետական արգելավայրը զբաղեցնում է 6 946.7 հա և ընդգրկում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփի լեռնազանգվածի բարձր լեռնային հատվածը: Այն ապահովում է Խուստուփի լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքը, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործումը:

“The Khustup” State Reserve occupies 6 946.7 hectares and covers the high mountainous part of the Khustup mountain range in the southwestern Meghri mountain range. It provides the development of the upper part of the Khustup mountain massif forest zone, the development of the meadow-steppe and marine natural ecosystems, the landscape and biodiversity, the nature monuments, the conservation of natural environment, and the sustainable use of natural resources.

«Արևիք» ազգային պարկ տեղամասի տարածքում առկա է լանդշաֆտային գոտիների գրեթե ողջ համակարգը՝ սկսած ցածր և միջին լեռնային կիսաանապատներից մինչև բարձր լեռնային տափաստաններն ու Մեղրի գետի վերին հոսանքների մերձալպյան տիպի լանդշաֆտը: Տարածքը կազմում է շուրջ 30 354 հա: Հատուկ ուշադրության առարկա են վայրի բնության հազվագյուտ և ոչնչացող տեսակները: Այստեղ հայտնաբերվել է Հայաստանի Կարմիր գրքում գրանցված զոլավոր բորենին:

In the territory of the “Areviq” National Park, almost all the landscape zones are available, ranging from low and medium mountainous semi-deserts to highland plains and landslide-type landscapes of the upper currents of the Meghri River. The area is about 30 354 hectares. Special attention is paid to rare and endangered species of wildlife. It has been discovered here in the Red Book of Armenia.

«Բողաքար» պետական արգելավայր տեղամասը գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային լանջերին՝ 1 400-2 100 մ բարձրություններում: Ստեղծվել է բուսական ու կենդանական աշխարհի էնդեմիկ և հազվագյուտ տեսակների պահպանության նպատակով:

The area of "Boghakar" State Reserve is located in the southern zone of the Zangezur Range, at the altitudes of 1 400 - 2 100 meters. It has been created to preserve the endemic and rare species of wild and wildlife.

«Զանգեզուր» պետական արգելավայր տեղամասը զբաղեցնում է Զանգեզուրի լեռնաշղթայի Ողջի և Գեղի գետավազաններն ու Բարգուշատի լեռնաշղթայի հարավային լանջերը և սահմանակցում է Մեղրու լեռնաշղթային՝ արևելքում:

“Zangezour” State Reserve occupies the Voghji and Geghi River basins of the Zangezur Range and the slopes of the Bargushat mountain range and borders the Meghri Mountain in the east.

«Սև լիճ» պետական արգելավայր տեղամասը գտնվում է Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար լեռան խառնարանային մասում՝ 2 658 մ բարձրության վրա: Լիճը կազմավորվել է ձնհալից և բնական աղբյուրներից, լցվելով լեռան խառնարանը: Առանձնացվում են 102 տեսակի բույսեր: Արգելավայրի նպատակն է պահպանել բարձր լեռնային հրաբխային ծագման եզակի ջրավազանը և նրա հարակից բնատարածքները:

Ողջի գետի աջ ափին, անտառում է գտնվում Վահանավանքը (X-րդ դար)՝ պատմական Սյունիքի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը, իսկ 25 կմ հեռավորության վրա՝ նեղ կիրճերով, թավուտ անտառներով «Շիկահող» պետական արգելոցը:

Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Մարզի ամենագրավիչ վայրերից մեկը, հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձան Տաթևի վանական համալիրն է (IX դար), որտեղ 1390-1435 թթ. գործել է Տաթևի նշանավոր համալսարանը:

2010թ.-ին շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար «Տաթևեր» ճոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր:

Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝ Որոտանի ՀԷԿ-երի կասկադի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին:

2012թ. գործարկվեց Հին Խնձորեսկի երկու ձորափը (Ղանդունց նովն ու Ներքին թաղը) իրար միացնող իր տեսակի ու չափի մեջ եզակի կախովի կամուրջը: Կամուրջը հսկա ձորի մի ափից մյուսը ձգվում է ավելի քան 160 մետր: Բարձրությունն ամենախոր տեղում 63 մ է: Կամրջի բանուկ զանգվածը կախված է ամուր ու ձիգ ճոպաններից (կախովի կամուրջ), այդ պատճառով էլ քայլելիս կամուրջը ճոճվում է,այդ իսկ պատճառով ժողովուրդն այն անվանել է «Ճոճվող կամուրջ»:

Սիսիան քաղաքից 6 կմ հեռավորության վրա է գտնվում Շաքիի ջրվեժը՝ Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը (բարձրությունը 18 մ):

Մարզի պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են «Զորաց քարեր» հուշարձանախումբը, Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները:

Սիսիան քաղաքից 3.2 կմ դեպի հյուսիս գտնվում է «Զորաց քարեր» հուշարձանախումբը, որը հայտնի է նաև Քարահունջ անունով: Այն մեգալիթյան դարաշրջանի (Ք.ա. II հազարամյակ) ծնունդ է: «Զորաց քարեր»-ը հանդիսանում են աշխարհում հայտնի հնագույն մեգալիթիկ համալիրներից և աստղադիտարաններից մեկը, հնդեվրոպական քաղաքակրթության քարեդարան-վկայարան, որի գաղտնիքները դեռևս բացահայտված չեն

The "Black Litch" Sanctuary is located in the canyon of Mount Mets Ishkhanasar on the volcanic plateau of Syunik volcano, at 2 658 m high. The lake was formed from snow and natural sources, flooding the mountain. There are 102 species of plants. The objective of the Argyle is to preserve a unique high-mountainous hog breeding pool and adjacent natural sites.

Vahanavan (X century) is one of the spiritual and cultural centers of historical Syunik in the forest and on the shore of the “Shikahogh” state reserve with narrow gorges, 25 km away.

At the altitude of 3 250 meters above sea level, the Meghri River originates from the Kapuyt lake, and the Kaputjugh River from the Kaputjugh Mountain, with which the Voghji River is formed from the coast of Kajaran.

One of the most attractive places in the region, the monument of Armenian medieval architecture is Tatev Monastery complex (IX century), where 1390-1435 has been working at the famous University of Tatev.

In 2010 the longest ropeway of the world “Tatever” was put into operation (maximum height 380 m length 5.7) which passes through Vorotan river canyon, streches over mountains and reaches from Halidzor village to Tatev monastery complex.

Tatev hydro-electric station, i.e. the firstling of Vorotan hydro-electric stations cascade and Shamb reservoir are situated in the Vorotan pass, from where a water by tunnel with a length of 18 km reaches to turbines of Tatev hydro-electric station.

In 2012 was launched the unique of its type and size suspended bridge, which connects two sides of the Old Xndzoresk (Ghandunc nov and Nerkin tagh). The bridge stretches more than 160 meters from one side of the huge valley to another. The high is 63m from the deepest place. The mass of the bridge depends on strong and tatut ropes (suspension bridge) that is why the bridge is swinging when you walk in it, and for this reason people call it “Swinging bridge”.

Shaki waterfall, the biggest waterfall (18 m) of Small Caucasus mountains is situated in 6 km distance from Sisian town.

Among the cultural and historical monuments of the marz most famous are the group of monuments of ,,Zorac qarer”, the castles of Baghaberd, Halidzor, Vorotnaberd, the monasteries of Tatev, Vorotna, Bgheni, the monastic complexes of Vahanavank and Ericavank, the mausoleum monument of Aghitu, the mausoleum hill of Sisian since the neolit era, the little church of Meghri and the efensive towers of the city.

,,Zorac qarer” group of monuments is situated 3.2 km north from Sisian city. It is also called Qarahundj and it’s a creation of megalitic era (BC II millennium). ,,Zorac qarer” is one of the famous ancient megalitic complexes and observatories, it is a stone-aged cestificate of Indo-European civilization, whose mysteries aren’t revealed by the science yet. ,,Zorac qarer” is often called ,,Armenian Stonehenge” considering that there is a megalitic observatory there in researcher’s

գիտության կողմից: Ձորաց քարերը հաճախ անվանում են «հայկական Սթոունհենջ»՝ նկատի ունենալով, որ ուսումնասիրողների կարծիքով այստեղ նս առկա է մեգալիթիկ աստղադիտարան: opinion.

ՀՀ Սյունիքի մարզը, զբաղեցնելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

RA Syunik marz occupying strategic and geographic-political important position, having rich resources of natural raw materials, industrial big capacity and being one of the biggest administrative and economic regions of the republic, at the same time is remained as a one of not enough inhabited and economically developed marzes, which is connected with a big distance from the capital and lack of alternative modes of transport communication.

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ):

It is the richest marz of the republic with useful minerals. The most important of them are non-ferrous metals (copper, molybdenum, zinc and others non-ferrous) and precious metals (gold, silver) and also non-metal useful minerals (construction and decorative stones, basalt raw materials, limestone and burnt shale marble and granite resources).

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:

The most developed branches of economy are industry and agriculture.

2016թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 14.4 %
- գյուղատնտեսություն 7.4 %
- շինարարություն՝ 7.3 %
- մանրածախ առևտուր՝ 1.3 %
- ծառայություններ՝ 2.3 %

In 2016 the share of economy main branches of RA Syunik marz in total volume of correspondent branches of the republic comprised

- industry 14.4 %
- agriculture 7.4 %
- construction 7.3 %
- retail trade 1.3 %
- services 2.3 %

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

The main branches of marz industry are mining industry and production of electric energy. The prevailing part of electrical energy produced in the marz belongs to Vorotan hydro-electric station cascade.

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ:

The agriculture of the marz is mainly specialized in plant growing (especially grains and potato growing) and animal husbandry (especially cattle farming).

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Freight and passenger transportations in the marz are implemented by road, railway and electric transports (cableway).

Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի Իսլամական Հանրապետությունը հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

Armenia-Iran motor-road passes through the marz, which has a great importance for the marz economy development. In 2008 the “Kapan-Tsav-Meghri” motor-road of strategic importance was put into operation, which is alternative for “Kapan-Qajaran-Meghri” interstate road alternative and in technical indicators it surpassed the last one.

Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

The major motor-road which connects RA to Artsakh and the only direct connection way between RA and The Republic of Islamic Iran are passing through the marz.

Կապան քաղաքը (2017թ. տարեսկզբին՝42.6 հազ. մարդ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3 201 մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա: Տնտեսության

Kapan town (as of the beginning of 2017 comprised 42.6 ths. person) is situated at the foot of Khustup mountain (3 201 m), is situated in 301 km distance from Yerevan.

առաջատար ճյուղն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, կարի, ոչ հանքային շինանյութերի, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և սարքավորանքի արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

The main branches of economy are industry and construction. The leading trend of industry is mining industry, especially non ferrous and noble metals production. The manufacturing industry (production of food cloting, non-metallic construction materials aliuminium and metal plastic products, wood and wood products, furiture and equipment) and electricity production have also the siqnicant share.

Քաջարան քաղաքը (2017թ. տարեսկզբին՝ 7.0 հազ. մարդ), գտնվում է Երևանից 327 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 25 կմ: ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա:

Qajaran town (as of the beginning of 2017 comprised 7.0 ths. person), is situated in 327 km distance from Yerevan and in 25 km from the centre of the marz is the centre of the republican non-ferrous metallurgy, based on the exploitation of rare mine that is a powerful mine basis of cooper and molybdenum.

Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

The main branch of economy is mining industry. Construction also has its part in the economy of the town.

Գորիս քաղաքը (2017թ. տարեսկզբին՝ 20.4 հազ. մարդ), գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 63 կմ, տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

The main branch of Ghoris town (as of the beginning of 2017 comprised 20.4 ths. person), it is situated in 236 km distance from Yerevan and 63 km from the centre of the marz economy is industry. Basically, productions of electric energy, food, textile and sewing product, aluminum and metal-plastic product, wood working and electronics are developed.

Սիսիան քաղաքը (2017թ. տարեսկզբին՝14.8 հազ. մարդ), գտնվում է Երևանից 206 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 110 կմ, տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները:

Sisian town (as of the beginning of 2017 comprised 14.8. ths. person), is situated in 206 km distance from Yerevan and 110 km from the centre of the marz economy is mainly specialized in mining industry, in particular, non metal mineral other produce production and manufacturing industry, of which food and beverages, textile and sewing produce productions.

Դաստակերտ քաղաքը (2017թ. տարեսկզբին՝ 0.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 226 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 130 կմ: Աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Dastakert town (as of the beginning of 2017 comprised 0.3 ths. Person) is situated in 226 km distance from Yerevan and 130 km from the centre of the marz.

Մեղրի քաղաքը (2017թ. տարեսկզբին՝4.5 հազ. մարդ), գտնվում է Երևանից 373 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 75 կմ, տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

The prevailing trend of Meghri town (as of the beginning of 2017 comprised 4.5 ths. person), is situated in 373 km distance from Yerevan and 75 km from the centre of the marz economy is manufacturing. Electric energy, fruit tin and beverages productions have certain share.

Ագարակ քաղաքը (2017թ. տարեսկզբին՝ 4.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 385 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 90 կմ, տնտեսության առաջատար ոլորտը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանային և մաքսային կետերը:

The main branch of economy of Agarak town (as of the beginning of 2017 comprised 4.3 ths. person), is situated in 385 km distance from Yerevan and 90 km from the centre of the marz is mining industry, the main important of which is non ferrous metal production. The town economy development is connected to cooper and molybdenum production. Armenia-Iran border post, customs-house and cross-border market are situated in Agarak.

# ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2017թ. հունվարի 1-ի դրությամբ
# DE JURE POPULATION BY AGE –SPECIFIC GROUPS, 2017 as of January 1




# ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ
# RETAIL TRADE UNITS

| | Քանակը<br>Number | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | |
| Մանրածախ առևտրի օբյեկտներ,ընդամենը | 383 | 398 | 399 | 415 | 429 | Retail trade units, total |
| *այդ թվում՝* | | | | | | *of which:* |
| խանութներ | 167 | 183 | 201 | 226 | 263 | shops |
| կրպակներ | 174 | 168 | 151 | 135 | 112 | kiosks |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | - | - | - | - | - | markets of agricultural produce |
| սպառողական ապրանքների շուկաներ | 4 | 8 | 7 | 7 | 5 | markets of consumer goods |
| առևտրի այլ օբյեկտներ | 38 | 39 | 40 | 47 | 49 | other trade units |

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## EDUCATIONAL INSTITUTIONS

| | Քանակը Number | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | |
| Պետական նախադպրոցական | 52 | 52 | 51 | 53 | 55 | State pre-school |
| Պետական հանրակրթական | 121 | 121 | 121 | 121 | 118 | State general educational |
| Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 17 | 17 | 18 | 18 | 18 | Music and art school youth creative(cultural) centre |
| Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական[1] | 4 | 4 | 4 | 4 | 4 | State preliminary vocational educational[1] |
| Պետական միջին մասնագիտական ուսումնական | 7 | 7 | 7 | 7 | 7 | State middle vocational educational |
| Պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 | State higher educational |
| Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ | 2 | 2 | 2 | 2 | 2 | Branch of state higher educational |
| Ոչ պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 | Non-state higher educational |

## ՔԱՂԱՔՆԵՐ
## TOWNS/CITIES

| Անվանումը | Name | Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ* Number of dejure population as of January 1, 2017, person * |
|---|---|---|
| Կապան | Kapan | 42 571 |
| Գորիս | Goris | 20 398 |
| Սիսիան | Sisian | 14 835 |
| Քաջարան | Qajaran | 7 050 |
| Մեղրի | Meghri | 4 522 |
| Ագարակ | Agarak | 4 258 |
| Դաստակերտ | Dastakert | 298 |

## ԳՅՈՒՂԵՐ
## VILLAGES

| | Անվանումը | Name | Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** Number of dejure population as of January 1, 2017, person ** |
|---|---|---|---|
| **Կապանի տարածաշրջան Kapan district** | | | |
| 1. | Ագարակ | Agarak | 165 |
| 2. | Աղվանի | Aghvani | 77 |
| 3. | Աճանան | Atchanan | 163 |
| 4. | Անտառաշատ | Antarashat | 94 |
| 5. | Առաջաձոր | Arajadzor | 135 |
| 6. | Արծվանիկ | Artsvanik | 502 |

[1] Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:
Including those middle vocational educational institutions, which implement preliminary vocational program.

| | Անվանումը | Name | Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** Number of dejure population as of January 1, 2017, person ** |
|---|---|---|---|
| 7. | Գեղանուշ | Geghanush | 238 |
| 8. | Գոմարան | Gomaran | 48 |
| 9. | Գեղի | Geghi | 147 |
| 10. | Գեղավանք | Geghavank | 6 |
| 11. | Կարդ | Kard | - |
| 12. | Կիցք | Kitsq | - |
| 13. | Վերին Գեղավանք | Verin Geghavanq | - |
| 14. | Քարուտ | Qarut | - |
| 15. | Դավիթ Բեկ | David Bek | 766 |
| 16. | Եղեգ | Egheg | 84 |
| 17. | Եղվարդ | Eghvard | 248 |
| 18. | Լեռնաձոր | Lernadzor | 686 |
| 19. | Կավճուտ | Kavchut | 76 |
| 20. | Մուսալլամ | Musallam | 77 |
| 21. | Ներքին Գիրաթաղ | Nerqin Giratagh | - |
| 22. | Վերին Գիրաթաղ | Verin Giratagh | - |
| 23. | Խդրանց | Khdrants | 55 |
| 24. | Ծավ | Tsav | 314 |
| 25. | Շիշկերտ | Shishkert | 48 |
| 26. | Կաղնուտ | Kaghnut | 103 |
| 27. | Ձորաստան | Dzorastan | 64 |
| 28. | Ճակատեն | Chakaten | 138 |
| 29. | Ներքին Խոտանան | Nerqin Khotanan | 65 |
| 30. | Ներքին Հանդ | Nerqin Hand | 82 |
| 31. | Նորաշենիկ | Norashenik | 81 |
| 32. | Նոր Աստղաբերդ | Nor Astghaberd | 39 |
| 33. | Աջաբաջ | Ajabaj | 10 |
| 34. | Գետիշեն | Getishen | 50 |
| 35. | Ոչեթի | Vocheti | - |
| 36. | Շիկահող | Shikahogh | 122 |
| 37. | Շրվենանց | Shrvenantz | 60 |
| 38. | Չափնի | Chapni | 76 |
| 39. | Սյունիք | Syunik | 738 |
| 40. | Բարգուշատ | Bargushat | 55 |
| 41. | Դիցմայրի | Ditsmayri | 76 |
| 42. | Խորձոր | Khordzor | 15 |
| 43. | Սզնակ | Sznak | 124 |
| 44. | Սրաշեն | Srashen | 83 |
| 45. | Սևաքար | Sevaqar | 88 |
| 46. | Վանեք | Vanek | 52 |
| 47. | Վարդավանք | Vardavanq | 99 |
| 48. | Վերին Խոտանան | Verin Khotanan | 188 |
| 49. | Տանձավեր | Tandzaver | 185 |
| 50. | Տավրուս | Tavrus | 93 |
| 51. | Ուժանիս | Ujanis | 81 |
| 52. | Քաջարան | Qajaran | 197 |
| 53. | Օխտար | Okhtar | 69 |

| | Անվանումը | Name | Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** Number of dejure population as of January 1, 2017, person ** |
|---|---|---|---|
| Գորիսի տարածաշրջան<br>Goris district | | | |
| 1. | Ակներ | Akner | 1095 |
| 2. | Արավուս | Aravus | 171 |
| 3. | Բարձրավան | Bardzravan | 135 |
| 4. | Խնածախ | Khnatsakh | 817 |
| 5. | Խնձորեսկ | Khndzoresk | 2 011 |
| 6. | Խոզնավար | Khoznavar | 379 |
| 7. | Խոտ | Khot | 896 |
| 8. | Կոռնիձոր | Kornidzor | 1 050 |
| 9. | Հալիձոր | Halidzor | 596 |
| 10. | Հարթաշեն | Hartashen | 676 |
| 11. | Հարժիս | Harjis | 751 |
| 12. | Ներքին Խնձորեսկ | Nerqin Khndzoresk | 262 |
| 13. | Շինուհայր | Shinuhayr | 2 501 |
| 14. | Շուռնուխ | Shurnukh | 145 |
| 15. | Աղբուլաղ | Aghbulagh | - |
| 16. | Վանանդ | Vanand | - |
| 17. | Ձորակ(Փայտամշակման գ.կ.) | Dzorak (Village near wood-working factory) | - |
| 18. | Որոտան | Vorotan | 276 |
| 19. | Սվարանց | Svarants | 276 |
| 20. | Վաղատուր | Vaghatur | 378 |
| 21. | Վերիշեն | Verishen | 2 103 |
| 22. | Տաթև | Tatev | 828 |
| 23. | Տանձատափ | Tandzatap | 106 |
| 24. | Տեղ | Tegh | 2 234 |
| 25. | Քաշունի | Qashuni | 16 |
| 26. | Քարահունջ | Qarahunj | 1 348 |
| 27. | Քարաշեն | Qarashen | 519 |
| Մեղրու տարածաշրջան<br>Meghri district | | | |
| 1. | Ալվանք | Alvanq | 277 |
| 2. | Գուդեմնիս | Gudemnis | 37 |
| 3. | Լեհվազ | Lehvaz | 603 |
| 4. | Լիճք | Lichk | 131 |
| 5. | Կարճևան | Karchevan | 226 |
| 6. | Կուրիս | Kuris | 44 |
| 7. | Նռնաձոր | Nrnadsor | 121 |
| 8. | Շվանիձոր | Shvanidzor | 269 |
| 9. | Վահրավար | Vahravar | 46 |
| 10. | Վարդանիձոր | Vardanidzor | 172 |
| 11. | Այգեձոր | Aygedzor | 6 |
| 12. | Թխկուտ | Tkhkut | 87 |
| 13. | Տաշտուն | Tashtun | 104 |
| Սիսիանի տարածաշրջան<br>Sisian district | | | |
| 1. | Ախլաթյան | Akhlatyan | 539 |
| 2. | Աղիտու | Aghitu | 401 |
| 3. | Անգեղակոթ | Angeghakot | 1 663 |

| | Անվանումը | Name | Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** Number of dejure population as of January 1, 2017, person ** |
|---|---|---|---|
| 4. | Աշոտավան | Ashotavan | 621 |
| 5. | Արևիս | Arevis | 82 |
| 6. | Բալաք | Balak | 167 |
| 7. | Բնունիս | Bnunis | 120 |
| 8. | Բռնակոթ | Brnakot | 1 975 |
| 9. | Գետաթաղ | Getatagh | 173 |
| 10. | Գորայք | Gorayk | 484 |
| 11. | Դարբաս | Darbas | 641 |
| 12. | Շամբ | Shamb | 428 |
| 13. | Թանահատ | Tanahat | 21 |
| 14. | Թասիկ | Tasik | 290 |
| 15. | Իշխանասար | Ishkhanasar | 251 |
| 16. | Լծեն | Ltsen | 91 |
| 17. | Լոր | Lor | 317 |
| 18. | Ծղուկ | Tsghuk | 365 |
| 19. | Հացավան | Hatsavan | 254 |
| 20. | Մուցք | Mutsk | 310 |
| 21. | Նժդեհ | Njdeh | 109 |
| 22. | Ցղունի | Tsghuni | 52 |
| 23. | Նորավան | Noravan | 455 |
| 24. | Շաղատ | Shaghat | 988 |
| 25. | Շաքի | Shaki | 1 276 |
| 26. | Շենաթաղ | Shenatagh | 347 |
| 27. | Որոտան | Vorotan | 305 |
| 28. | Սալվարդ | Salvard | 241 |
| 29. | Սառնակունք | Sarnakunk | 490 |
| 30. | Սպանդարյան | Spandaryan | 441 |
| 31. | Վաղատին | Vaghatin | 606 |
| 32. | Տոլորս | Tolors | 401 |
| 33. | Տորունիք | Torunik | 127 |
| 34. | Ույծ | Uyts | 539 |

* ՀՀ մարզերի քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:
Ppulation of town of the RA marzes is presented according to current statistics data based on population Census of 2011.

** ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղերի կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 952 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2017թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +13.8%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

The sources of these data on RA rural communities are the state statistical reporting forms «Sex and age composition of rural population» provided by the rural comminities on annual basis. According to those sources the sum total of de jure population of 952 RA rural settlements as a whole and by marzes has some deviation from the same data of current statistics of population, which are based on the data from administrative registers of RA Ministry of Justice and RA Police under RA Government (as of 01.01.2017 the deviation comprised +13.8% for the republic). The deviation is mainly stipulated by the absence of the system of exchange, comparing and checking in individual data level of the given information between rural communities.

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2016թ.

# SOME SOCIAL INDICATORS OF DISTRICT COMMUNITY WITH 10 000 POPULATION IN RA SYUNIK MARZ, 2016

| | Ընդա-մենը Total | նրանցից՝ *including:* | | |
|---|---|---|---|---|
| | | կանայք[1] women[1] | տղա-մարդիկ[1] men[1] | |
| Բնակչությունը, մարդ | 10 000 | 5 111 | 4 889 | Population, person |
| Ծնվածներ, մարդ | 106 | 51 | 55 | Births, person |
| Մահացածներ, մարդ | 98 | 45 | 53 | Deaths, person |
| Ամուսնություններ | 48 | X | X | Marriages |
| Ամուսնալուծություններ | 9 | X | X | Divorces |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 31.0 | X | X | Total area of housing stock provided per inhabitant, square metre |
| Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝ | | | | Education sphere, attendance to educational institutions, person |
| նախադպրոցական | 310 | 149 | 161 | pre-school |
| հանրակրթական | 1 176 | 567 | 609 | general schools |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 184 | 124 | 60 | musical, art schools, creative centers for children |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 29 | 8 | 21 | preliimary vocational |
| միջին մասնագիտական | 90 | 44 | 46 | middle vocational |
| բարձրագույն մասնագիտական | 138 | 72 | 66 | higher vocational |
| Առողջապահության ոլորտ՝ | | | | Public health sphere |
| հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 39 063 | ... | ... | annual attendance to polyclinic during the year (number of attendances) |
| Մարզիկներ, մարդ | 132 | 32 | 100 | Athletes, person |
| Զբաղվածներ, մարդ | 3 302 | 1 432 | 1 870 | Employed, person |
| նրանցից՝ գիտական հիմնարկներում | - | - | - | including - in Science establishments |
| նրանցից՝ գիտության դոկտոր | - | - | - | including - doctors of Science |
| գիտության թեկնածուներ | - | - | - | candidates of Science |
| ուսուցիչներ | 152 | 125 | 27 | teachers |
| բժիշկներ | 20 | ... | ... | physicians |
| միջին բուժանձնակազմ | 57 | ... | ... | paramedical personnel |
| Գործազուրկներ, մարդ | 435 | 170 | 265 | Unemployed, person |
| Սոցիալական ապահովության ոլորտ | | | | Social insurance sphere |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1 674 | 985 | 689 | total pensioners/ as of the end of the year/ person |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 261 | X | X | families that get poverty family benefit and one-time benefit |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | | Annual attendance during the year |
| գրադարան | 26 628 | ... | ... | library |
| թատրոն | 1 624 | ... | ... | theatre |
| համերգ | - | - | - | concert |
| թանգարան | 724 | ... | ... | museum |
| Իրավական ոլորտ | | | | Law sphere |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 46 | X | X | total crimes, during the year |
| այդ թվում՝ ոչ մեծ ծանրության | 23 | X | X | of which - not grave crime |
| միջին ծանրության | 14 | X | X | medium crime |
| ծանր | 8 | X | X | grave crime |
| առանձնապես ծանր | 1 | X | X | special grave crime |

[1] Ցուցանիշները հաշվարկային են:
The indicators are accountable.